

Տեղական ինքնակառավարման մարմինների
2017թ. փետրվարի 12-ի հերթական ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
1	Դիտորդների հավատարմագրումն իրականացվում է ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ	30, մաս 2	մինչև 2.02.2017	ԿԸՀ
2	Որոշվում է համայնքի (եթե համայնքի տարածքը (բացի Երևանից) ընդգրկված է մեկից ավելի ընտրատարածքների կազմում) առավել թվով ընտրողներ ընդգրկող ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, որն իրականացնում է տվյալ համայնքում ՏԻՄ ընտրությունների կազմակերպումը և անցկացումը քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 65 օր առաջ	34, մաս 3	մինչև 9.12.2016	ԿԸՀ
3	Համայնքում ընտրական տեղամասերը կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ	14, մաս 1	մինչև 29.12.2016	Լիազոր մարմին
4	Համայնքում տեղամասային կենտրոնները սահմանվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ	16, մաս 1	մինչև 31.12.2016	Համայնքի ղեկավար
5	Ընտրական տեղամասերի համարները սահմանվում և ԿԸՀ ներկայացվում են հասարակելուց հետո երկօրյա ժամկետում	50, մաս 1 կետ 3	մինչև 2.01.2017	ԸԸՀ
6	Ընտրողների ցուցակների օրինակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում և տեղամասային կենտրոնում փակցվում է քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ	10, մաս 1 11, մաս 3	մինչև 3.01.2017	Լիազոր մարմին, ՏԿ տարածքը տիրապետող
7	Ընտրողների ցուցակներն էլեկտրոնային կրիչով ԿԸՀ-ին տրամադրվում են քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ	10, մաս 4	մինչև 3.01.2017	Լիազոր մարմին
8	Քվեարկության օրվա, ընտրական տեղամասի համարի, քվեարկության տեղի և ժամանակի մասին ընտրողները ծանուցվում են ընտրության նշանակվելուց հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ	11, մաս 6	մինչև 9.02.2017	Լիազոր մարմին
9	Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում ներկայացվում է քվեարկության օրվանից ոչ ուշ քան 5 օր առաջ	12, մաս 1	մինչև 7.02.2017	Քաղաքացու դիմումի հիման վրա՝ լիազոր մարմին
10	Թեկնածուների գրանցման փաստաթղթերը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության օրվանից ոչ շուր, քան 35 եւ ոչ ուշ, քան 30 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն	145, մաս 3	8.01.2017 - 13.01.2017 մինչև ժամը 18:00	Թեկնածուներ, լիազոր ներկայացուցիչներ
11	Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուր, քան 30 եւ ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչեւ ժամը 18:00-ն	145, մաս 4	13.01.2017 - 18.01.2017 մինչև ժամը 18:00	ԸԸՀ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
12	Թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիրն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 5 օրվա ընթացքում	6, մաս 5	19.01.2017 - 23.01.2017	Թեկնածուներ, լիազոր ներկայացուցիչներ
13	Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է թեկնածուների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7 օրը, ավարտվում՝ քվեարկությունից մեկ օր առաջ	18, մաս 1 141	25.01.2017 - 10.02.2017 մինչև ժամը 24:00	Գրանցված թեկնածուներ, վստահված անձեր
14	Համայնքի ղեկավարի թեկնածուները իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը և ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ Ավագանու անդամի և մինչև 10 000 ընտրող ունեցող համայնքի ղեկավարի թեկնածուները 500.000 դրամը գերազանցող գումար ծախսելու դեպքում նախընտրական հիմնադրամի մուծումների և դրանց օգտագործման հայտարարագիրը ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են սույն կետում նշված ժամկետում	27, մաս 1 140, մաս 2	3.02.2017	Թեկնածուներ
			մինչև 14.02.2017	
15	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի, կատարվում է Մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը ներկայացնելու ժամկետի սկիզբը	42, մաս 5	մինչև 12.01.2017	ԿԸՀ
16	Տեղամասային ընտրական հանձնաժողովներում անդամներ նշանակելու մասին հայտերը ԿԸՀ ներկայացվում են քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն	42, մաս 6	13.01.2017 - 18.01.2017 մինչև ժամը 18:00	Աժ խմբակցություն ունեցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ), ԸԸՀ
17	Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար նշանակելու մասին ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի որոշումն ընդունվում է ոչ ուշ քան տեղամասային ընտրական հանձնաժողովի 1-ին նիստի համար սահմանված ժամկետի սկիզբը	42, մաս 4	մինչև 21.01.2017	ԸԸՀ
18	Տեղամասային ընտրական հանձնաժողովների առաջին նիստերը հրավիրվում են հանձնաժողովի կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին	42, մաս 7	21.01.2017 ժամը 12:00-ին	ԸԸՀ
19	Ինքնաբացարկի մասին դիմում կարող է ներկայացվել քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ, մինչև ժամը 18:00-ն	139, մաս 2	մինչև 2.02.2017 ժամը 18:00	Թեկնածուներ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
20	Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկատվություն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է քվեարկության օրվանից 10 օր առաջ	10, մաս 2 57, մաս 6	2.02.2017	Լիազոր մարմին
21	Քվեաթերթիկները տպագրվում են քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 10-ը եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ	57, մաս 6	2.02.2017 - 9.02.2017	ԿԸՀ
22	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում է քվեարկության օրվանից ոչ շուրջ, քան 5 եւ ոչ ուշ, քան 3 օր առաջ	58, մաս 3	7.02.2017 - 9.02.2017	ԿԸՀ
23	Ընտրողների ցուցակները՝ էլեկտրոնային կրիչով ԿԸՀ-ին տրամադրվում են քվեարկության օրվանից 2 օր առաջ	10, մաս 4	10.02.2017	Լիազոր մարմին
24	Ընտրողների ցուցակները (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակները)՝ ըստ տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները՝ տպագրված 2 օրինակից, տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ	10, մաս 3	10.02.2017	Լիազոր մարմին
25	Ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է քվեարկության օրվանից 2 օր առաջ	11, մաս 4	10.02.2017	ՏԸՀ նախագահ
26	Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն	55, մաս 3	11.02.2017 մինչև ժամը 24:00	Համայնքի ղեկավար ԸԸՀ, ՏԸՀ
27	Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները եւ կնիքների փաթեթները հանձնվում են քվեարկության նախորդ օրը	57, մաս 7: 10 58, մաս 4	11.02.2017	ԸԸՀ
28	Տեղամասային ընտրական հանձնաժողովում քվեաթերթիկները, ընտրողների ցուցակների էջերը ստորագրվում են քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24:00-ն	59, մաս 7	11.02.2017 մինչև ժամը 24:00	ՏԸՀ
29	Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը սկսվում է քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին	62, մաս 1	12.02.2017 ժամը 07:00	ՏԸՀ
30	Քվեարկությունը	54, մաս 1	12.02.2017 ժամը 08:00-20:00	ՏԸՀ
31	Ընտրական տեղամասում քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը ընտրատարածքային ընտրական հանձնաժողով հաղորդվում է	6, մաս 10	Քվեարկության օրը՝ մինչև ժամը 11:30, 14:30, 17:30 և 20:30	ՏԸՀ նախագահ
32	Տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփվում և արձանագրությունը հրապարակվում է ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 10 ժամ հետո	71, մաս 5	13.02.2017 մինչև ժամը 06:00	ՏԸՀ նախագահ

Հ/Հ	Միջոցառման բովանդակությունը	ՀՀ ԸՕ հոդված	Կատարման ժամկետը (ներառյալ)	Կատարողը
33	Ընտրական փաստաթղթերը և կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 12 ժամվա ընթացքում	71, մաս 9	13.02.2017 մինչև ժամը 08:00	ՏԸՀ նախագահ եւ քարտուղար
34	Քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրվում են քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում	74, մաս 1	13.02.2017 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
35	Վերահաշվարկի, ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներն ընդունվում են քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն	48, մաս 1	13.02.2017 մինչև ժամը 12:00-18:00	ԸԸՀ
36	Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովից ԿԸՀ ներկայացվում են քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում	58, մաս 5	մինչև 15.02.2017	ԸԸՀ
37	Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովում վերահաշվարկի աշխատանքներն իրականացվում են դիմումների ընդունման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը, ժամը 14.00-ն	48, մաս 6	14.02.2017 ժամը 09:00 - 17.02.2017 մինչև ժամը 14:00	ԸԸՀ
38	Ընտրությունների արդյունքներն ամփոփվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը	74, մաս 8	17.02.2017	ԸԸՀ